

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Յայտարարումիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարուի իւնների համար վճարում եմ

իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄԵԼԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881

(S E U ʒ b r n r ʔ S E r ʔ)

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакция «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ:—Ն երբ ի՞նչ ահ
ս ու թ իւն: Նամակ երևանից: Նամակ երևա
նից: Նամակ Ղարաբի: Նամակ խմբագրին: Եր
բեք երբեք:—Ս ր ա ա թ ի՞նչ ա հ ու թ իւն: Րօ
Ֆոր և Գամբետտա: Թիւրքիա: Միջուրդ զա
տարան:—(Մյակի) հեռագրիներ:—Յայտարարու
թիւններ:

ՔԱՂ ԱՔԱԿԱՆ ՄՏԱԾ- ՄՈՒՆՔՆԵՐ

Ինչ կարծիք պետք է ունենայ թիւրքիան Եւրոպայի մասին: Եւրոպայի բոլոր հզօր պետութիւնները միացած՝ ուռաթիւրքաց պատերազմից յետոյ վճիռներ են կայացրել Բէրլինի կօնգրէսում: Եւ ահա երեք տարի է անցել կօնգրէսի կայանալուց յետոյ, — իսկ նրա վճիռներից գրեթէ ոչ մինը ղեռ չէ կատարւում:

Հագելե կարողացան ստիպել
Բ. Դուռը յանձնել Պուլցինիոն
Չէրնոգորիային: Իսկ Յունաս-
տանի սահմանների խնդիրը մին-
չև պիտի անորոշ է մնում: Լււր-
պան իր ամբողջ զորութեամբ, իր
նաւերով չէ կարող կատարել տալ
Բ. Դրանք իր կենդրէսի վճիռ-
ները, յուսահատվում է և յետ է
քաշվում: Յետոյ, կարծես խելքի
գալով, կրկին առաջարկում է
միջնորդ դատարան Յունաստանի
հարցի պատճառով: Թււրքիան
մերժում է և միջնորդ դատա-
րանը: Ինչ պէտք է անի Լււր-
պան, — յայտնի չէ:

Այդպիսով Չեքոզորիայի
 խնդիրը լա թէ վատ վճռվեցաւ,
 Յունաստանի խնդիրը մինչև
 այժմ չէ վճռվում և գուցէ երկար
 ժամանակ չի վճռվի, իսկ Հա-

յատառանի խնդրի մասին, կարծես
բոլորովին մոռացել է Ներսիսան:

Գուցէ եթէ Անդրիան չունենար իր ներքին խռովութիւնները, չունենար իր կալուածական խնդիրը Իրլանդիայում, նա մենակ կարող էր աւելի շատ անել արեւելեան խնդրի լուծելը առաջացնելու համար, քան թէ ամբողջ Աւստրիան, իր երևելի համաձայնութեամբ:

Այդպիսով Թիւրքիան իս-
ղացնում է ամբողջ Աւրօպային:
Եւ անպիտանն այն է, որ մոլե-
ւանդ թիւրքերը չեն ասի թէ
Զւրօպայի պետութիւնները չը
կարողացան համաձայնութիւն
լայացնել իրանց մէջ բայց կա-
նեն թէ ամբողջ Աւրօպան Օս-
մանեան պետութիւնից վախե-
տում է: Այդ իր թուլութեամբ
Զւրօպան կը կորցնի իր ամբողջ
հեղինակութիւնը արեւելքում:

Q. U.

ՆԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

10 դեկտեմբերի

Տճուն է՛ք, զանի ներանում, ուր հիւանդ չը
լինի, վարդաշխանը, հարկըք, ըրաջաւը (կո-
կորդագաւ) ջերմի ամեն տեսակը՝ տարածված են
ոչ միայն քաղաքումս, այլ և գաւառիս մէջ։
Թուրք հասարակութեան մէջ աւելի է հիւանդա-
ցողների և մեռնողների թիւը, քան թէ հայերի
մէջ։ Սորա պատճառը այն է, որ թուրքերի բնա-
կարանները, թաղերը, խանութները, դպրոցները
չատ աւելի կեցողոտ են, քան թէ հայերինը։
Թուրքերի բաղանիքները տարածող են ամեն տե-
սակ հիւանդութիւնների, որովհետև նրանց աւա-
ռանքի կողմ ջրի չտեսանանների մէջ ամենայն
ցաւաւ և աղտոտ մարդ մտնող լողանում է և
մի և նայն ջրով լողանում են ամենքը, համոզ-
ված լինելով թէ ջուրը չի պղծվի։ Բացի այդ՝

թորքերը հիւանդութեան միջոցն բռնկէ չեն զինում, այլ իրանց մօլաններն են զինում, որոնք ամենայն ցաւ կամենում են բռնկել ազօրէններով կամ պառաւական խորտնորթութիւններով կամ խօսելով, մեր արհեստաւորները կամաւորականների դէմքաց, ցուրտ, խնամ ու վաւար խանութները, չուկաներուս պատրաստի վաճառվող բոլոր, կրակող զէնքներ թէ՛ են վաճառում թէ՛ հում, վաճառանոցների չորջրը և քաւաւանաւարայների մէջ զիլված աղտոտութիւնները, հրապարակների անմաքրութիւնը, ցուրտ ու կեղտոտ բաղանիքները և այլն, ահա, սրանք են գլխաւոր պատճառ հիւանդութիւն տարածող միջոցները, որոնց վրա չը կայ ոչ մի կողմից առողջապահական հսկողութիւն:

Աւելացնենք սրանց վրա և այն, որ քաղաքներ հիւսիսային կողմում գտանվում է հայոց համգլուտարանը, հարավային կողմում թուրքացի գերեզմանատունը, և արևմտեան կողմում ուռուպը որոնցից մշտ ահաբեկ դադարը բերվում են քահանա հետ քաղաքային մէջ և որոնք քաղաքային կենտրոնը մի-մի փերտ հաղորդ թէ հեռու են գտանվում։ Ի նկատի առնելով և այն, որ արդեն Եմանտէր մեռածների գերեզմանները մի արշինի խոր չեն փորվում և նրանց դիակները շատ թեթեւ են ծածկվում հողով, ապա կարելի է երևակայել թէ որ աստիճանի հսկողութիւն է հարկւած որ մեր քաղաքին— Այլ ևս չեն խօսում տակից ասանափութ քսած ասան ֆա — հայի և Ժանգուտ զոհնի մէջ փորոտիքից տապալած ածխի վտիւր լուրջում ուռնիլքի մէջ, խորարարների Ժանգուտ կաթնաքիւրի մէջ եկած հոտած կերակրանքների մասին, չեմ խօսում մեր պղտորած դիմիւնքի ապագայ կոստիւմներով պարզաշինչու վտանգաւորութեան մասին և այլն և այլն։ Թողում եմ որ այս ամէն չարիքների մասին խորհեն և ուշաբուրժիւն դարձնեն այն մարդիկ, որոնց հսկողութեան է յանձնված մեր ողորմելի քաղաքը, և որ աս արդարանոց կայ, ոչ հիւանդանոց, ոչ էմանային դեղատոնոց, ոչ հասարակաց բժշկանոց, որոնց մասին մեր քաղաքային վարչութիւնը գուշէ էլ մտածում։

Նրեականացեցք ձեզ մի աղքատ ընտանիք, Նինգեց հողուց բաղկացած: Երբ ամնական հասոյթը աման կամ տանն և Նինգ բուրլուց աւելի չէր արգահիւանդը (տիֆը) կամ մի ուրիշ վարակիչ լեւանդութիւնն մտել է այդ ընտանիքի մէջ: Դա կայ կարող բժիշկի հրաւիրելը, որովմէսն ճրտեղծեալ կարգաբանչիւր՝ ա՛յց ի համար երկու ուրիշ, փայտօտիւր փող, ճարի վարձ և այլն: Վաւիկէ Նլանդութիւնը տարածվում է աղտոնդից մնում է հարուստները տները մէջ ևս: Թէև յս հարուստները հրաշխում են բժշկին, բայց այնուհետ չեն կարողանում առանց զոհի ազատել, որովհետեւ ընդհանրապէս վարակված օդիցն ճորտ դռանը և է ուսման անկում:

Սխառման հայերէն տարբերակները չեն մտաւորաբար օգտուած ընդ մարտնչական մասին հասկանալով որ ամենից շուտ օգնու վարակվում և վարակում հասարակութեան սրտին և աղքատին։

Քաղաքին հեջ մի հատիկ բարեմիտ մարդ
անվայել, որ խոստացաւ 10,000 լուբրիկ նուբրիկ
սառսան-աղբիւրից ջուր բերելու հպատակին
հարստանիւր փակեցին իրանց քաակնելի
րանը մի աղբալիկ բարեբերութեան դէմ և
հնչեւ օրս գործը մնացել է անորոշ դրովթեան
վրէ Ոչ ոք է մասնորոշ, որ խրաբանչուր տանի
10 հայ և 700 թուրք ծնած երեխանիւրից միայն
հայ երեխայ է ապրում, և 50 թուրք, միւս-
րը մեռնում են, ըստ մեծի մասին ջրի և օդի
անարբորութեան պատճառով։ Արդէն չափիկ ու-
ռուկ են, որ Բառսան-աղբիւրների ջուրը հեշ-
տեթիւնով կը դալ քաղաքս. ծախքի համար էլ
տուում են, որ 24—30,000-ից աւելը չի լինի,
և 10,000-ը մեծ Ղանաղ Ղաղարանին է տա-
ւ, նա որ զ. օր. պարտեւ է իր հաշուով է
եւ. բայց մնացել 14-20000-ր գոնէ ամբողջ

քաղաքի վրա պետք է հանչել, որպես զի այս ամենապարզորոշ և ամենաբարձր առաջարկության չը մնայ անիրագործելի: Եթե քաղաքին մե՛կ 20 հարուստ մարդ չը գտնվեն, որք հ ա ղ ա ռ ա կ ա ն ըրտելի նուիրեն և գործը գլուխ հանեն գտնե՛հ հեշտութիւնով կարելի էր գտնել հազա՛մարդ, որ ապա՛յն 20-ական ըրտելի՛ Հարկաւոր է միայն, որ քաղաքին վարչութիւնը փոքր ինչ աշխատայ այդ կենսական խնդրի մասին: Եթե այժմ չը յաջողվէր, այն ժամանակ կարելի էր պահանջը դումարով փոխարինարար լին առնել մի տեղից և բերած շուրք բաժանելով լեղակրի վրա իւրաքանչիւր տանից տարեկան մի որոշ տուրք առնել. դոր. 1—2—3 ըրտելի, մինչև պարտքը վճարելը: Քաղաքս 3500 տանից աւելի է. թո՛ւ 500 տունը ձրի ջուր խմէր, մի հազարը տար մի մի ըրտելի տան գլուխ. միւսը՝ երկու-երկու ըրտելի, երրորդը՝ երեքական ըրտելի. այդպիսով տարեկան մօտ 14,000 ըրտելի էր հաւաքուիլէն ոչ ոքի էլ մի զգալի ծանրութիւն չէր լինի, այն ինչ հարիւրաւոր հողիներ մահից կաղաղովէին Ալլիոսը ձր բանական մարդը կը մերժեր իր առողջութեան համար վճարել այդ չնչին գումարը: Եթե՛ մինչև անգամ իմ ցոյց տուած գումարի ձկնան էլ ժողովվէր, դարձեալ 3—4 տարովա՛յ միջոցում կարելի էր վերցրած պարտքը վերան, գործն էլ գլուխ բերել իսկ ինչ կը վերաբերի քաղաքին օրի մարդութեան, այդ մասին ևս հրաւիրում ենք քաղաք. վարչութեան ուշադրութիւնը դէպի Ս. Սարգսի անապարճը, Մե՛կ է ի թիւ և ջառս ու ի ետի աւերակը, դէպի ոստիկանատան քամակը հրապարակը, դէպի աշուտեղը, ուր մտադրութիւն աշ գինապախա շինելու և վերջապէս դէպի բա՛նա ղիւնի և իր կտրուկը: Այդ տեղերում զիջած մարդկանց աղբերից մշտապէս բարձրանում են դարչա՛տու գողոյշիներ և ապականում օդը, այց գուցէ ասէր, որ այդ տեղերը մշտապէս մաքրել չի կարելի, քանի որ յարմարաւոր արտադրողներ չը կան. համաձայն եմ, միայն, թե՛ հարուստ է շտապել շինել աղգպիսի արտադրողներ մինչև դորանց շինելը կարելի եղածին չափ հանգէ և արդիւն առնալովնեղին, որ դոնէ փոքր ինչ հեռու գնան ձանադարձեղներ և իւրաքանչիւր խանութպանի չուտ-չուտ մաքրել տալ ըրտը՛ը, ապա թե՛ ոչ հիւանդութիւնն անապախա ըլինի քաղաքիցս, որովհետեւ այդ տեղերը տանալում են քաղաքին կենսութիւն: Քաղաքին եկամուտը հասնում է 55,000 ուրւլիւն և այդ գումարից դուր ցաղակացրել էք քա՛աքին մարդը՛ւնեան համար մի չնչին գումար, արձեմ 7—800 ուրւլիւն, դոնէ այդքանն էլ չօք ծախսէիք մարդութեան մասին:—Եթե՛ չեմ խալվում մօտ երկու ամիս է, որ քաղ. վարչութիւնը մի առ ո ղ ա պ ա հ ա կ ա ն մ ա ս ն ա ո ղ ո ղ է Ընտրել, որի նախադա՛ն է իրաւասու քաղաքապիսի բժիշկ պ. Նիսն Տիգրանեանը, այն թէ ինչ չինեց այդ ժողովը, մինչև օրս չի մէ առնել:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

24 *դեկտեմբերի*

«Մշակը» զննասիրար է, ազգակործան է, մո-
րեցնող է, ասում են «Մշակին» երդուհալ թըշ-
մալները, գոռում են բայ աչքով կոյրերը, գը-
ւմ են սե նախանձով՝ լցված սրտեր, սուսը
մարտություն տեղ ծախող դիպվածաբար մըղ-

Իրացւոց միջեւ՝ ճշմարտութիւնը կը ծածկվի, լայն
կը քաղաղվի, արդարութիւնը լոկ ցնդոք է։
Այնպէս այն ժամանակները, երբ խօսքերով
նոյն պատիւ ու փառք ժառանգոււմ, Ներկայ
դար խօսքի տեղը դռնը, արդիւնք է պահանջուում
Դեռ թիկնակ անտանի ըտէր նկատուան ցաւէ

մի փոքր յետ նայեցէք, դիտեցէք ոչ շատ հեռու անցնելով, համարադրեցէք ներկայի հետ: Ամեն մի կողմը թողնելով, նայեցէք միայն թէ ինչ էր գաւառական երկրասարդը տասը տարի սրանից առաջ, և ինչ է նա այժմ:

Նա գաւառացի երկրասարդը մի փոքր, թուրած, բիծացած, անգործ մի էակ էր. նա չունէր զարգացողութիւն. նրա համար ամբողջ տիեզերքը ներկայութեամբ էր իր շուրջը երեւող նեղ տարածութեան մէջ. նա չը գիտէր ինչ ասել է լրագիր, գրականութիւն, ընթերցանութիւն. նա չէր հասկանում ինչ է ընկերութիւն, ընկերի համար աշխատել, հասարակութեան համար ապրել, ազգի կարիքների վրա մտածել, ազգի վերջերը դարձնելու ձգտել. մի խօսքով նա ճանաչում էր միայն իր հօր կտակած բռնութեամբ և տէրոգորման, իսկ եթէ ունէր մեծ ձգտումներ,—այդ Ն. բուսաղէմ գնալը, սուրբ Կարապետի պատ պահելը էր:

Ծնեց «Մշակը», ծնեց և գաւառական երկրասարդի բազմիկ աստղը, սթափեցրեց նորան, զարթեցրեց այդ թմրած ուժերը, բռնեց դրա ձեռքից, հանեց իր նեղ շրջանից, դուրս տարաւ, առաջնորդեց դէպի աւելի հեռուն, դէպի ճշմարտը, դէպի ազնիւր, դէպի իդէալականը: «Մշակը» տուեց հայ երկրասարդի կոչուած ձեռքը գրել, սորվեցրեց նրան չարժեք, նորանով արտայայտել իր սրտի կոկիճը, հոգու բերկրանքը, ներշնչեց գաւառական երկրասարդին այն ոգին, այն զօրութիւնը, որով սա փոքր իր ոտքերի վրա ծանրացող խառնարկ հիւսած շղթաները, պատառեց անզգայութեան պատանը, շունչ առաւ, ոտքի ելաւ, չորս կողմը դիտեց, իրան գնեց և դառն տխրութեամբ իր սիրտը լցրեց. զգաց իրան. ճանաչեց իրան—մի քանի ժամանակ վարանեց, տատանմունքի մէջ էր. բայց և յետոյ գտնէ իր խոր խոր ցաւերը հառաչելուն, անագին ու խառնարկ մտքակալուն, ճշմարտը սիրելուն իր մեղքի վերջին շիթը գտնել նա երգուեց:

Այս, սա մի անգլիսի ճշմարտութիւն է, որ ուրանալու համար հարկաւոր է անսահման կամակոր և յանդուգն լինել: Սա այն ճշմարտութիւնն է, որ ամեն մարդ էլ սրտով կը խոստովանի, բայց գուցէ շատերը ամաչեն խօսքով էլ նշանը քարուղել, մի գուցէ այդ անկեղծ խոստովանութեան մէջ է նոյն իսկ ճէնց իրանց անկուսը:

Թիֆլիսցին չէ համակրում «Մշակին»: Ուղիղ է, որովհետև նրա մէջ ազգային ասպարեզում գործողները «Մշակի» երգուեալ թնամիներն են, անհասկանալի, որոնք դէպքերի խաղալիք են, փառաւորութեան գերիներ, եսամոլութեան խնկարկութիւն պահանջող քրմեր: Նրանք դեռ մանկութեան խանձարուրից սովորել են իրանց ցանկութիւնը յատուկ մեղք, իրանց ասածը կատարել: Նրանք կատարում են ինչ որ ուզում են և ոչ թէ ինչ որ արժէ և, ինչ որ ճշմարտ է:

Դրա հակառակն է գաւառներում. այստեղ գիտեն գնահատել աշխատանքին, որովհետև իրանք էլ ապրել են մշակութեան օրեր. այստեղ գիտեն որոշել սուրբ արդարեւ, կեղծ-ճշմարտից: Իրանք, թող նրանք «Մշակի» զարթեցրած հարցերը աղճատեն, ծուռ ու մոլոր կերպով բացատրեն,—դրանով չեն կարող մոլորեցնել մեզ: Անցան խաբեքայութեան դարերը, անցան քարոզչական ու լոկ խօսքերի ժամանակները. այժմ մարդիկ սովորել են խօսողի քոզը երևից յետ քաշել, որ խօսողի իսկական պատկերը տեսնեն: Ով ուզում է վայելել համակրութիւն, թող սովորի պարզ խօսել, ազնիւ լինել, սրտի և բանականութեան ազդածը քարոզել և ոչ թէ ժանգոտ կրքի սև մրուրով ծխոտվել և ուրիշներին էլ ծրխոտեցնելու ձգտել:

Վրոյր

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

13 դեկտեմբերի

Կարսի հայ-կաթողիկոսներ շնորհակալութիւն են յայտնում ախալքալաքցի պարոն Յովնանէս Տեր-Սարգսեան Մարգարեանցին, նրա համար որ վերջինս տեղական կանցլէթարի արքունի ծառայութեան մէջ ունեցած աւելորդ ժամերից օրական մի ժամ ընծայելով մեր ուսումնարանին, պատարագի ճայնագրեալ եղանակը աշակերտներին բերանացի հաղորդելու ճիշդաբար յանձն առեց: Արդէն այժմ փառաւորապէս երգում են նորաչէն հոգակալ եկեղեցում: Այս եղանակը բացի ժողովրդին ա-

խորժելի երեւալուց, վերցրեց նաև ձայնի չփոխութիւններն ու ներդաշնակային անկարգութիւնները, որ ունեն միշտ մեր եկեղեցական հին եղանակները առանց չափի լինելու պատճառաւ: Փափաքելի է, որ հայ-կաթողիկոսները ամեն տեղ ընդունեն հայկական ճայնագրութիւնը իրենց ուսումնարաններում:

Մեր փոքրիկ ուսումնարանին այս շնորհ անող պարոնը բաւական տաճարութիւններ կրեց իրեն ծանօթ հայ-լուսաւորչականների մի քանի անձնանքների կողմից, թէ ինչի կաթողիկոսներ մօտ շատ երթալ գալ ունի և նրանց հետ կը տեսնվի. մի քանիսը օրերով հետը խօսել անգամ արժան չեն սեպած, մանաւանդ երբ որ լսած են թէ՛ նրանց ուսումնարանումն էլ դաստառութիւն է անուս: Ի՛նչ մահացու մեղք...

Այդ զարմանալի բան չէ, քանի որ Թիֆլիսի միջոց կամ չըջակայ հայ ազգաբնակչութիւններից Կարս գործով պարագլուխների շատերից տեսնվեցաւ, որ նրանք, կամ Ռուսաստանի հայերի շատերը, կաթողիկ հայերի վրա բոլորովին օտար զարգաբար ունեն, լաւ եւ ճշտ չունեն. մականքներով անկից որ մի օր, երբ հայ-կաթողիկոսները ըստ սովորութեան երգելով մի նշանեալ տաճարում էին միմայն նրանց ուղեկցութեամբ, երգերի վրա ուշադրութիւն դարձնելով իրար տեսնելութիւն էին տալիս թէ զրոյս էք, որքան էլ ֆրանսիկ են, էլի մի երկու խօսք հայեկաբ խառնում են երգերի մէջ, իսկ մնացեալը բոլորն էլ ֆրանսիկաբ է: Ասա դժբաղդութիւնը այն տեղին է հասել, որ հայը հային չի ճանաչի. հայը հայի կամ օգնութիւն անելը սրբապաշտութիւն է համարում և որ աւելի՛ ճշմարտն է, հայի խղճմունքներն դիպչում է ու մինչև անգամ մի հային լաւութիւն անող մի ուրիշ հայի հետ երրորդ հայը խօսել արժան չէ համարում:

Եթէ կողմնակի հայ-հոգեւորականութիւնը կրօնափոխութեան հետ ազգաբնակչութիւն (ուզում եմ ասել հայապարտութիւն) ունենայ, և կամենայ, կարող է վերջ տալ այս դժբաղդութիւններին, հասկացնելով ժողովրդին թէ, ինչ է ա զ գ ինչ է կ ռ օ ն ը. խոստովանում եմ, որ լրագրի կամ բրօշուկների ձայնը հայ-հասարակութեան շատերի ականջին չէ հասել:

Յ. Գաթէն

ՆԱՄԱԿ ԽԱՐԱԳՐԻՆ

Մեծ-Վարաքիլիսա, 1 դեկտեմբերի

Նշելով իր 10-ին հրաւիրագրով եւ կանչված լինելով Նրեանի սուղը, տուն, տեղ, բնութեւնը երեսի վրա թողած, ճանապարհ եմ ընկնում, որ նշանակեալ ժամանակին հանդիպանամ դատաւորին:

Մի և նոյն օրը, հէնց դուրս եմ գալիս գիւղից թէ չէ, Սարիբէք քեօխովն իր մանր ու խոշոր չաւուշներով գալիս է իմ դուռը և բաւաւր է ի ձիանոց համար տեղ է պահանջում և մի և նոյն ժամանակ չարչարում է կոտորել կողպած դուռը: Այս բուպէին կին դուրս է գալիս և խնդրում է քեօխովն դուռը չը կոտորել և ցոյց է տալիս աւելի յարմար տեղ ձիանոց համար: Քեօխովն իր վաղուցվայ մրեթը ինձանից առնելու համար, չէ լսում կնոջս, կողպած դուռը կոտորում է և հրամայում է միջի հարկաւոր իրեղենները բոլորը դուրս թափել: Կինս որպէս տան տէր կրկին և կրկին աղաչում է թէ, չեղբայր միջ փչացնի այդ իրեղենները, միջ դուրս թափի դրանք, ձիւն համար տեղ էք ուզում, ահա մէկ ուրիշը, ինչքան ձի ուզում էք բերեք կապեցէք:

Այս ժամանակ քեօխովն դիմում է աւելի անբաղաւարտ միջոցների, հայհոյում է կնոջս և վերջապէս ձեռքից բռնում ու շարժում է դռանը դարձած փայտերի վրա: Կինս ուշաթափվում է և սկսում է արիւնհոտութիւն: Անցնում է 2 ժամ, կինս վրժում է իր երկամտեայ յղուցիւնը, ինչպէս և ապագուցեց բժիշկը իր բոլոր հետազոտութեամբ: Կինս ծանր հիւանդ է և բժիշկը այցելում է: Գործի եղելութիւնը յանձնված է քննիչին:

Յարգել խմբագիր, ով ունի ամուսին և ճանաչում է սովորական բարձր պատիւը, նա միայն կարող է մտնել իմ գրութեան մէջ և չափել իմ համբերութիւնը: Թող Սարիբէք քեօխովն իմ դուռը կոտորէ, իմ տունը քանդէ, և իմ բոլոր հարստութիւնը թող ունաւորակ տար:...

հաղիւ թէ բերան բաց անէի և խօսէի, բայց երբ նա կնոջ է հայհոյել, կնոջ է ծեծել և կնոջս գլուխն է բերել այդ դժբաղդութիւնը, այդ ժամանակ իմ համբերութեան թիւը կտրվում է և որպէս սղամարդ ստիպված եմ պաշտպանել իմ ամուսնու պատիւը: Այո, ամուսնական պատիւը պահանջում է շատ բան անել, բայց ես իմ յոյսս դրել եմ արդար դատարանի վրա և դիմել եմ դէպքի անաչառ դատաւոր: Եթէ այս միջոցն էլ անգործանք և չը կարողացաւ պատժել այդպիսի կամակորքին, այն ժամանակ ինձ մի բան կը մնայ, այն է ծախել իմ տուն ու տեղը և հեռանալ այդպիսի բռնաւոր քեօխովների երեսից:— Խնդրում եմք «ԿԱՅԱՅ» լրագրի մեծ խմբագրից արտասպէս այս փոքրիկ նամակը, մեր քեօխովն քաջագործութիւնները ուսու ընթերցողներին ծանօթացնելու համար:

Վանոյ ՆԵՂԱՏԵԱՆԵՅ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Կեկտեմբերի 15-ին Սղնախի շրջակայ գիւղերի վրացի քահանաները ժողով ունեին Բէդէլ աւանում» Ս. Նունէի վանքում, որտեղ վճռեցին, թէ իրանց ստանալի 120 ռուբլ ռոճիկից, պարտավորվում են իւրաքանչիւրը տարեկան 15 ռուբլ վերադարձնել գանձարանին, խնդրելով կառավարութեանը, որ Սղնախի քաղաքային ուսումնարանում իրանց զաւակների համար բերվի լատինական և յունաց լեզուի մի պրոֆէսոր, որ աշակերտները սեմինարիայում ուսումը աւարտելուց յետոյ միջոց ունենան շարունակել իրանց ուսումը բարձրագոյն դպրոցներում: Գումարը այսպիսով հասնում է մօտ հազար ռուբլու: Սրա մասին արդէն ուղարկված է խնդրեք էկզարխին, Խնդրում են նոյնպէս, որ քահանաների որդիքը միշտ առանց արգելքի ընդունվեն քաղաքային դպրոցում:

ՂԱՐՍԻՑ, պ. Եւգոր Խուրաւանցից ստացանք 5 ռուբլ յօդուտ Վանի սովետականներին:

Մեզ խնդրում են տպել հետեւեալ յայտարարութիւնը: «Ուտիերէն լաւ գիտացող մի հայ է հարկաւոր, նոյնպէս և մի քուրդերէն լաւ գիտացող: Դիմել «Մշակի» խմբագրատունը»:

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. «Ներկայումս մեր քաղաքում սատիկ թանգութիւն է տիրում գրեթէ ամեն տեսակ կենսական պիտոյքների, մանաւանդ ամենահարկաւորների վրա: Օրինակ սպիտակ հացի ֆունտը, որ անցեալ տարի 3—5 կոպէկ արժէր, այժմ 6—8 կոպէկ է, ու հաջորդ տարւոյ 2 կոպէկ էր, այժմ 4 կոպ., իւղը 32 կ., ուխարի մի 8 կ., բրինձը 12 կոպ., ձուի հատը 5 կ., Թէպէտ քաղաքային վարչութիւնը իր հաշուով սեւ ալիւր գնեց և բաժանեց հացաթուղիների վրա թխելու համար, որպէս զի 5-ժան գինով աղքատներին ծախեն հաջը, բայց այս նշանակած 3/4 կոպէկ գինն էլ աղքատների համար մի թխելու գին չէ և մեծ զանազանութիւն չունի ամենահասարակ հացից, որ ծախվում է 4 կոպէկով»:

Ստացանք ուսուց «Осכולки» պատկերադարը հրատարակութեան առաջին համար: Հրատարակվում է Ս. Պետերբուրգում, գեղեցիկ պատկերներով:

ՂԱՄԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այն կողմերը թանգութիւն է տիրում կենսական պիտոյքների վրա: Ալիւրի պուղը արժէ 2 ռ. 60 կ., գարին 1 ռ. 70 կ., իւղի ֆունտը արժէ 50 կ., պանիրը, հասարակը 15 կոպ., երկու ձուն 5 կ., միսը 8 կ., և օրից օր թանգանում է:

ՋԱՔԱՅԱՆԻ հայոց հոգևոր ուսումնարանի ուսուցիչ Արշակ Ազադեանց խնդրում է մեզ տպել մեր լրագրում հետեւեալ յայտարարութիւնը: «Ներկայ 1880 թվի ապրիլ 28-ին վերջ տալով լրակատար թաղամասութեան հայերէն լեզուով հետեւեալ հեղինակութեան «Бесѣда о природѣ, книгѣ для чтенія въ сѣлахъ и деревняхъ, о землѣ, солницѣ, звѣздахъ, растеніяхъ и животныхъ, съ 24 рисунками, Н. Зобова», պատիւ ունենալ այդ մասին յայտնելու իմ ազգայններին, որպէս զի ուրիշը ի գործ չը յանձն առնէ թարգ-

մանելու այդ գիրքը: Դուրսով սպագրելու եմ յիշեալ թարգմանութիւնս:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, որ դեկտեմբերի սկզբներում կրկին պատահեցին հրդեհներ Նուխու մէջ: Օրինակ այդպիսի մի մեծ տուն, որի մէջ պատուարվում էին չորս հայ բնասիւններ, ձրի և գործիքների պակասութեան պատճառով ոչինչ չը կարողացան փրկել խեղճերի ունեցած չունեցածից: Վնասը հասնում է երկու հազար ռուբլու:

Մեզ գրում են ՎԱՐԳԱՇԵՆԻՑ որ տէր-Գալուստ քահանան աղքատներին չէ պատկում միսնէն որ նրանցից չէ պահանջում մի գումար, որ նրանք անկարող են տալ: Այդ պատճառով մի քանիսները, աղքատներից նախապատում են այժմ ապրել իրանց սիրած կնոջ հետ օրինաւոր ամուսնական կապերից դուրս, որովհետև անկարող են վճարել տէր-հօրը նրա պահանջած պատկաւը: Աղքատներին տէր-Գալուստը նոյնպէս չէ թաղում միսնէն որ նշանաւոր գումար չը ըստանայ մեղեւտաբոյնից:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Բանդի այն խուցի մէջ, որտեղ նստած է կալանաւոր Ալեքսանդր Սեւիկեանց, բժիշկը նորերումս պառկեցնում է մի սարսափելի վարակիչ ցաւով հիւանդին: Սեւիկեանցը բողբոջում է քանի մի անգամ այդ տմարդի կարգապարտութեան դէմ, բայց ի դուր, մինչև որ չէ յայտնում թէ այդ մասին գանգատ է կամենում տալ Կովկասեան կենտրոնական բժշկական վարչութեանը: Այդ սպառնալիքը միայն ազդում է Նուխու զինուորական բժշկի վրա և հիւանդին խուցից հեռացնում են»:

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ ինչպէս լավում է, այդտեղի պրօֆէսորախի տեսուչ պ. Վինոգրադով շուտով փոխվում է և նրա տեղը նշանակվում է Թիֆլիսի գիմնազիայի յունարէն և լատինեքէն լեզուի մի ուսուցիչ: Նոյնպէս մեզ հաղորդում են, որ Երեւանի պրօֆէսորախի հայաց կրօնուսուցչ Կարապետ վարդապետ Ալվադեանը նշանակվել է Դուշու թեմի առաջնորդի փոխանորդ:

ԵՐԵՒԱՆԻՑ Թ. Մ. պարոնից մի սրտաշարժ նամակ ստացանք, որ «Մեղուի» մի յօդուածին պատասխան է: Բայց ցաւելով պէտք է ասենք, որ «Մեղուն» իրան իրաւունք է համարում ամեն բանի վրա գրել, ամեն սուրբ զարգաբար ծաղրել և անարգել, բայց շատ անգամ անհնարին է լինում նոյն արդէն տպված խօսքերին պատասխանել:

ՄԵՏՎԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են: «Բոլոր նշաններից երևում է, որ այս տարի ձմեռը ձիւնով առատ է լինելու և հետեւաբար զարմանք հացն էլ առատ է լինելու»:

Մեզ գրում են ՄԵՏՎԱՐԱՔԻԼԻՍԻՑ, որ այդ գիւղը նոր բացված և բացվելի փողոցների համար ոտովկան պ. Փիլոսոֆանց սատիկ հոգում է և ինքն ամենից առաջ 100 ռուբլ ստորագրեց այդ գործի համար: Եթէ մի պաշտօնեայ որ իր ռոճիկով է ապրում այդքան է առկա, աւելացնում է թղթակիցը, ուրեմն յոյս ունենք որ մեր հարուստ Յ. Արտեմանց գտնէ 300 ռուբլ կը ստորագրէ»:

ԴԵԲԵՆԵԻՑԻՑ մի պարոն գրում է մեզ: «Այստեղի հայոց հասարակութեան մէջ տիրում է մի կատարեալ թմրութիւն, սակայն ի միջիթաւութիւն հայերի, կան այստեղ մի քանի անձներ, որոնք եււանդով աշխատում են սթափեցնել հասարակութիւնը իր խոր քնից: Ուսուցիչ պ. Մեւլիթ-Շահնազարեանցի և մի քանի այլ անձանց աշխատութեամբ հիմնվում է այժմ մեզ մօտ մի մատենադարան, բայց նա դուրի է զեռ շատ պարագաներից, ուստի մեծ օգուտ կը լինէր մեզ համար, եթէ հայոց հասարակութիւնը առհասարակ օգնութիւն տար այդ նորածին մատենադարանին»:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԻՑԻՑ մեզ գրում են որ այս տարի այդ կողմերում սովի երկիւղ չը կայ: Այժմ ալիւրը ծախվում է 1 ռ. 50 կ., միսն 1 ռ. 90 կ.: Միւս ուսուցիչները բաւական առատ են և միջակ գինով են ծախվում: Ճանաչաւոր կորեկ կայ՝ ասում է գիւղացին, իսկ կորեկը

Թանգութեան կողմէն զենքերից մէկն է։ Բայց ցախը (փայտը) թանգացաւ, սաժէնը ծախուաւ է 60 ռուբլից մինչև 70 ռուբլի։ Խոտը և գարին ցորենի գինով է ծախվում։

Ռուսաց լրագիրները հաղորդում են որ Ս. Պետերբուրգի «Новое Время» ամենօրեայ թերթը եկող 1881 թվից կը սկսի հրատարակվել օրը երկու անգամ, այսինքն մի թերթ առաւօտ և մի թերթ երեկոյեան։ «Новое Время» մեծ թերթ է։ Կա կը լինի առաջին ռուսաց լրագիր որ օրը երկու անգամ կը հրատարակվի։ Արտասահմանում վաղուց է արդէն որ լրագիրներից շատերը օրը երկու անգամ են հրատարակվում։ Իսկ մեզ մօտ, հայերէն մէջ, խմբագրող պէտք է իր գրպանից մի քանի հազար ռուբլ ընծայի ազգին ամէն տարի, որպէս զի կարողանայ գլուխ բերել չարաթը հինգ անգամ հրատարակվող լրագիրը։ Եւ գորա համար ստանում է ազգի կըրթեալ, համալսարանական անունոված, կամ խաւարասը դատարկալոյթիկ մասի կողմից ամենատար հայտանքներ, որպէս վարձատրութիւն։

ՄԵԴՈՒՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՇՖՈՐ ԵՒ ԳԱՄԲԵՏՍԱ

Լրագիրների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ Երբ Բոշֆոր իր «Intransigent» լրագրի մէջ պատերազմ սկսեց Գամբետայի դէմ, ամենքը ասում էին, որ «նրանիսական առիժը անպատճառ կը յաղթէ այդ կապիկին»։ Այդ մարգարէութիւնը կատարվեցաւ։ Գամբետան սաստիկ հարուած հասցրեց Բոշֆորին, հրատարակելով նրա նամակը, որով կոմունարներին նախկին առաջնորդը և զեկապարը մերժում է իր մասնակցութիւնը կոմունային և խնդրում է Գամբետայից միջնորդել թիւրի առաջ նրա մեղադրական գործը փոփոխելու համար։

Բոշֆոր այդ նամակի հրատարակելու միւս օրը երկար բացատրութիւններ տպեց, որոնցով նա յայտնում էր, թէ այդ նամակը զրկել է իր պաշտպան Ալբեր Ժօլի թիւյաղութեամբ և նամակը զրկուց յետոյ հասկացել էր նրա ունայնութիւնը և խնդրել էր պաշտպանից նամակը այրել։ Բոշֆոր հաւատացնում է, որ այդ նամակը չէին այրել և այժմ, գտնելով Ժօլի թղթերի մէջ, յանձնել էին Գամբետային։ Գամբետան «Bépublique Française» լրագրի մէջ բացարձակ յայտնում է, որ նա Ժօլից ստացաւ այդ նամակը 1871 թ. յուլիսի և անյապաղ ուղարկեցաւ թիւրի մօտ Բոշֆորի օգտին միջնորդելու համար։

Գլուխը է իմանալ, թէ վիճարանողներից ո՞րն է արդար, միայն թէ այդ նամակի հրատարակելը շատ վատ հետեւանքներ կունենայ Բոշֆորի համար, որովհետեւ նա կը կորցնի իր ազդեցութիւնը կոմունարների վրա։ Բոշֆոր իր նամակով ուրանում է կոմունային մասնակցելու և հաւատացնում է, որ կոմունայի ժամանակ փարիզի մէջ մնացած խմբագիրներից ինքը միակ էր, որ չը նայելով բոլոր սպառնալիքներին, համարձակվում էր գատապարտել գերիների վերցնելը և կենտրոնական վարչութեան աւերող կարգադրութիւնները։ Կոմունարները այդ գործը Բոշֆորին երբեք չեն ների, մասաւանդ որ նա ձգձարիւ է խօսում և կոմունայի ժամանակ նա դատապարտում էր նրա բոլոր չարագործութիւնները։

Այս պոլեմիկը մի և նոյն ժամանակ հետաքրքիր է և այն կողմից, որ նա յայտնում էր իր անհրաժեշտ գատարանների անբարեխղճութեան վրա։ Քայանի է, որ մի ժամանակ կոմունայի պրօկուրորը հրաման տուեց կալանաւորել և հրացանի առնել

Բոշֆորին, որովհետեւ այս վերջինը համարձակվեցաւ դատապարտել առաջինի կարգադրութիւնները գերիների մասին, իսկ բռնապարտիստները, ցանկանալով ազատվել պտելի Բոշֆորից, սրա մեղադրական գործի մէջ մոցրել էին և այն, թէ Բոշֆոր համարձակ էր կոմունայի պրօկուրորի հետ։ Այլըն թիւրը հրամայել էր դուրս գցել մեղադրական գործի այդ մասը։

Հետաքրքիր է նոյնպէս և այն իրողութիւնը, որ ինչպէս Բոշֆոր, նոյնպէս և Գամբետան չափազանց գնահատում են լուսիկա Միշլի կարծիքը։ Այս վերջինը նորեւում մի նամակ տպեց, որի մէջ նա հրաժարվում է Բոշֆորի արարքները բռնելուց, բայց նախազգուշացնում է հասարակութեանը Գամբետայի որոգայթներից, որովհետեւ օտ «չափազանց անբարեխղճ է մի և նոյն ժամանակ ծարպիկ մարդ է»։

Այս երրորդ անգամ է, որ Գամբետան իր թշնամուն յաղթելու համար հրատարակում է նրա նամակը, որ յայտնի է, թէ ի՞նչ ճանապարհով է նրա ձեռքը ընկել։ Այդպիսի զենքի գործածելը անվայել է Գամբետայի զիւրքը «ունեցող մի պետական մարդու համար։ Շատերը հաւատացնում են, որ Գամբետան ունի միւս նշանաւոր հանրապետականներից զրկած այդպիսի նամակներ, որոնց նա պահում է, քանի որ այդ մարդիկ նրա հըռ ծառանք են և որոնք մամուլի կը յանձնվեն, երբ այդ մարդիկ Գամբետայի դէմ մի բան կանեն։

ԹԻՒՐԻՒՄ

Վիեննայից գեկտեմբերի 15-ից հեռագրում են փարիզի «Temps» լրագրին հետեւեալը։ Թիւրքաց կառավարութեան շրջաբերականը ուղարկված է գեկտեմբերի 14-ին։ Ասիւֆաշա յայտնում է չերնօգորիական հարցի վերջնականացէս վճռվելը, որ ցանկալի էր պետութիւնների համար և որ ապացուցանում է Բ. Գրան բարեխղճութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը հաւատացած է, որ այդ զիջումն անելուց յետոյ, եւրօպական պետութիւնները իրաւաւոր կերպով կը վարվեն իր հետ և կաշխատեն առաջն առնել այն բոլոր նախագիծերի, որոնք ընդգէմ են Բ. Գրան շահերին, որովհետեւ սա ձգտում է իրագործել Բերլինի դաշնագրի բոլոր վճիռները։ Թիւրքիան յունական խնդրի վճռվելուն նոյնպիսի նշանակութիւն է տալիս, ինչպէս որ չերնօգորիական հարցին։ Նա յայտնել է իր զիջումների վերջնական սահմանները։ Գեկտեմբերի 3-ի շրջաբերականով Թիւրքիան բաւական մեծ և հարուստ երկիր է տալիս Զոնաստանին և այժմ խնդրում է պետութիւններից, որ նրանք զրկեն յունական կառավարութեանը ընդունել նրա առաջարկութիւնը։ «Գրանից յետոյ, ասում է Ասիւֆաշա, յունական կառավարութիւնը կը հնազանդվի եւրօպայի այդ անփոփոխ վճիռն, որովհետեւ նա էլ պէտք է հոգայ երկու հարեան պետութիւնների քարեկամութեան և հանգստութեան մասին։ Զոնաստանի մէջ պատերազմական մեծ պատրաստութիւններ են տեսնվում, փոխառութիւն է անվում զենքեր և պատերազմական պաշարներ զննելու համար, բոլոր տեղերից յոյն կամաւորներ են հաւաքվում։ շեյխական մամուլը լիքն է Թիւրքիայի դէմ ուղղված թշնամական յօդուածներով, որոնք զրկում են ժողովրդին արեւահեղ պատերազմ սկսել հարեան պետութեան հետ։ Սահմանների վրա կատարվող աւազակութիւնները հետզհետէ մեծ չափեր

են ստանում։ Յոյն աւազակների խումբերը անցնում են Թիւրքիայի հողերը և բռնութիւններ են գործում։ Մենք բաւականաւորում ենք յայտնելով պետութիւններին գործերի այս անընտան գրութիւնը։ Թիւրքիան բոլոր այդ ցոյցերին հանգստութեամբ է վերաբերվում, միայն թէ նա էլ զգոյշ կը լինի և անհրաժեշտ պատրաստութիւնները կը տեսնի։ Բ. Գուսը յարձակողական զիւրք էի ընդունի, բայց կը կարողանայ պաշտպանել իր իրաւունքները, եթէ նրա վրա կը յարձակվեն։ Վերջապէս Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է, որ Զոնաստանը աւելի խնայել քաղաքականութեանը հետ ի և աշխատի վերականգնել բարեկամական յարաբերութիւնները հարեան երկու պետութիւնների մէջ։

ՄԻՋՆՈՐԻ ԴԱՏԱՐԱՆ

Միջնորդ դատարանի մասին գերմանական «Nordd. Allg. Ztg.» լրագրի մէջ գեկտեմբերի 20-ից տպված է հետեւեալ յօդուածը։ Յոյն-թիւրքական վէճը միջնորդ դատարանի օգնութեամբ վճռելու մասին բանակցութիւնները պետութիւնների մէջ դեռ ևս շարունակվում են և նրանց հետեւանքների մասին որոշ ոչինչ չէ կարելի ասել։ Երբ առաջին անգամ այդ միտքը ծագեցաւ, Գերմանիան իր կողմից յայտնեց, որ հազիւ թէ նրան կարելի լինի իրագործել և որ նա դարձեալ այժմեան դրութեանը կը հասցնի։ Երբ այդ առաջարկութիւնը պաշտօնապէս որովեցաւ գերմանական կառավարութեանը, այս վերջինը եւրօպական բանակցութիւնների ընդհանրութիւնը պահպանելու համար, յայտնեց, որ ինքը կընդունի այդ առաջարկութիւնը, եթէ կը համաձայնեն միւս պետութիւնները և այն պայմանով, որ ամենից առաջ համաձայնութիւն ստացվի Բ. Գուսից և Զոնաստանից, թէ նրանք մտադիր են հրապարակել միջնորդ դատարանի վճիռներին։ Բացի այդ գերմանական կառավարութիւնը պահանջեց, որ եթէ պետութիւնները համաձայնեն միջնորդ դատարանի վերաբերութեամբ, այնպիսի պայման չեն, որ հարցը ոչ թէ միաձայն վճռվի, այլ որ չորս պետութիւններից կազմված մեծամասնութեան վճիռը պարտաւորեցուցի լինի միւս երկու պետութիւնների համար։ Առ այժմ անհրաժեշտ է, որ եւրօպական վեց պետութիւններն էլ մի նախագիծ կազմեն և ընդհանուր ոյժերով աշխատեն համաձայնեցնել Զոնաստանին և Թիւրքիային, որ նրանք դատարանի վճիռը իրանց համար պարտաւորեցուցի համարեն։ Մինչև այս գործը չը կատարվի պետութիւնները դարձեալ անհաղորդութիւններ կը պատահեն և զուգէ միջնորդ դատարանի վճիռը աւելի էլ անկարելի կը լինի իրագործել, քան թէ Թիւրքիան կոնֆերանցայի վճիռը։

«Temps» լրագրի վիեննայի թղթաւորն նոյն հարցի մասին գրում է գեկտեմբերի 19-ից։ Մի քանի օր է, ինչ դարձեալ սկսել են խօսել եւրօպական միջնորդ դատարանի մասին։ Երկրի է հաստատ ասել, որ դրա մասին պետութիւնները բոլորովին չեն բանակցում։ Ինչպէս երեւում է, եւրօպական կառավարութիւնները հասել են այն եզրակացութեան, որ եթէ մինչև անգամ Զոնաստանը համաձայնի նոր բանակցութիւնների սկսել Թիւրքիայի հետ, նրանք ոչինչ հետեւանքներ չեն ունենայ։ Այդ պատճառով ֆրանսիական, գերմանական և աւստրիական կառավարութիւնները աշխատում են մինչև զարուսը այնպիսի վճիռ կայացնել, որ կարելի լինի հաւատացած լինել թէ երկու կողմերն էլ նրան կենթարկվին և այնուհետեւ բոլոր ոյժերով ազդել Զոնաստանի և Թիւրքիայի վրա եւ թարկվել այդ վճիռն։ Շատ հաւանական է, որ պետութիւնները մեծ փոփոխութիւններ կենթարկեն, ինչպէս Թիւրքիան կոնֆերանցայի որոշված սահմանները, նոյնպէս Թիւրքաց կառավարութեան նշանակածը։ Երեւի Կանինա և Մետցօյ Թիւրքիային կը անան, իսկ Լարիսայի և Պրեզեպայի ամբողջ նահանգները Զոնաստանին։ Արանք են եւրօպական կառավարութիւնների առ այժմ վերջնականապէս չորոշված նախագիծերը։

ՄՇԱՎԻ ԼԵՈՒՑԻՒՆԵՐ

ՄԻՋՈՒՆԴԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 գեկտեմբերի։ «Привит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է հետեւեալ հրամանը. մաքսային հարկը արտասահմանեան աղից փոքրացնել մինչև 20 կ., Արեւմտեկից աղիներ մինչև 10 կ. պուզից։ Մուրմանից բերվող աղի արտօնութիւնը և Սև ծովի և Ազովի նաւահանգիստներից աղ բերելու արգելքը առաջվայ պէս թողնել։ Զոնվարի 1-ից արտասահմանեան բոլոր ապրանքների վրա, բացի Թիւրքիայից, Պարսկաստանից բերվողները և աղը 10 կ. լրացուցիչ մաքսահարկ չեն նախկին հարկի իւրաքանչիւր ռուբլու վրա։ Մաքսահարկի շատացնելը վերաբերվում է նոյնպէս և այն ապրանքներին, որոնք մինչև 1881 թ. յունվարը մաքսատնից տարված չեն լինի։ Առեւտրական գոհումներն իրից լրացուցիչ հարկ վերցնել, իւրաքանչիւր վկայականից, առաջին վերլիկայից 235 ռ., երկրորդից դասակարգելով 5—35 ռ., առաջին կարգի գործակալների վկայականներից 10 ռ.։ Վկայականների և տոմսակների վերանորոգելու ժամանակամիջոցը շարունակել մինչև փետրվարի 1-ը։ Արդիւնաբերական և առեւտրական հիմնարկութիւնների թիւր իւրաքանչիւր վկայականի համար սահմանափակված է։ Մաքսային պահեստների մէջ պարանք պահելու վարձը կընկապատվում է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 գեկտեմբերի։ Պաշտօնապէս հաղորդված է, որ կոմս Կապիտա Մոսկովայի շրջանի ռուսաւարանական հոգաբարձու է նշանակված։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 գեկտեմբերի։ «Голос» լրագիրը հաղորդում է. Զինական գործերին վերաբերելու բանակցութիւնները որոշ բնաւորութիւն ստացան։ Զինատանը համաձայն է իր բոլոր երկրի մէջ թող տայ առսաց առեւտուր։ Սպասում են, որ յունվարի վերջին նոր դաշնագիր կը ստորագրվի։ Այսօր հասաւ Ս. Պետերբուրգ աւստրիական զեպան կոմս Կալսօրի։

ԳՈՒՐԲԱՆ, 18 գեկտեմբերի։ Բօքսերը դրուեցին Ներքի քաղաքը և շրջապատեցին Վրեզեր ամրոցը։

ՍՍՖԻԱ, 18 գեկտեմբերի։ Յանկով հրաժարական տուեց, Սլավեյնիկով ներքին գործերի մինիստրի պաշտօն ընդունեց, Սարաբով ժողովրդական լուսաւորութեան։

Կ. ՊՈԼԻՍ, 18 գեկտեմբերի։ Ֆինանսների մինիստրին հրամայված է մի ամսական ուժիկ պահստեցնել նահանգական և գեպանատունների թիւրք աստիճանաւորների ուժիկից։ Բացառութիւն է որված մայրաքաղաքի աստիճանաւորների համար։

Կ. ՊՈԼԻՍ, 19 գեկտեմբերի։ Բ. Գուսը մի շրջաբերականով մերժում է միջնորդ դատարանի մասին առաջարկութիւնը, իր կողմից էլ ոչինչ առաջարկութիւն չէ անում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 գեկտեմբերի։ «Journal de St.-Petersbourg» լրագիրը հաղորդում է, որ առսաց զիւրմամտների և Զգնեղի բանակցութիւնները Ս. Պետերբուրգի մէջ վերջացած են։ Այժմ սպասում են չինական կառավարութեան վճիռն նախագիծ համաձայնութեան մասին։

ԼՍԵՒՈՆ, 19 գեկտեմբերի։ Այսօր մի նիստերներ խորհուրդ կը լինի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 գեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 87 կ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 92 ռ. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ռ., 5 կ., երկրորդ 219 ռ. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ., երկրորդ 90 ռ. 75 կ., երրորդ 91 ռ. 4., ոսկի 8 ռ. 6 կ.։ Ռուսաց 1 ռ. 1օնգօնի վրա արժէ 24,24 պէս, ռուսաց 100 ռ. Աստրիւմի վրա 126,12 պէս, ռուսաց 100 ռ. շամբուրդի վրա արժէ 212 մարկ 62 պֆ., ֆարիզի վրա 263 ֆրանկ։ Բօրսայի արամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 գեկտեմբերի։ Այսօր ռուբլուրկեցաւ վիեննա զեպան Ռերի։ Երեկ հասաւ Ս. Պետերբուրգ շվեդացի դիւանական Նորդենշիլտ։

ՓԱՐԻՑ, 12 գեկտեմբերի։ Երէկ երեկոյեան Բլանկի վախճանիցաւ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵ

Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Երգէն վաճառվում է մեծադիր
ՕՐԵՑՈՅՑ
1881-թ. Բ.

Սկզբունք գեղարվեստական պատկերը
Ս. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ
Երկու օր՝ հրգ՝ մի՛ հմբ. դրուած են կարգաւ
հանդերձ

ԾԵՂԻԿ ԸՆՏԱՆԵԼՑ
յաւելուածով ա. տ.
սկզբունքն է գեղարվեստական պատկերը
ՍՈՎԵՄԼ ԶԱՅ ԸՆՏԱՆԵՐ
Գինն է մինչև 600 վ. 35 կոպէկ, իսկ նորանից
բարձր 40 կ.

Փոքրադիր
ՕՐԵՑՈՅՑ
1881-թ. Բ.
Հանդերձ երկու. գեղարվեստական պատկերաւ
ԶԱՅԱՍՅՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅ
և Ս. Պ. Բ. Զ. եկեղեցին Ս. ԵԿԱՏԵՐԻՆԵԱՅ
Գինն է 10 կոպ.
Տիրիսումը ծախվում է պ. 2. Գրիգորեանցի
գրաւիճաւանոցում:

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ
Բաց անկող իր բոլոր արգիւնաբերու-
թիւններն պահեստը միջի փողոցի վրա էա-
ժեկենայա կարգում Գարթվիլովի տանը,
պատիւ ունի առաջարկել պ. պ. աւետարա-
կաններն և գործածողներին ամեն տեսակ
պարտքեր, նոյնպէս և վիտաւակա-
նէր, գալովիկանէր, սիրով աւանդի
կաշիւնէր, թամբի և մեքենանէրի
բէ մէնէր: Ծախվում են գործարանի գներով:
6—20

ՄԵՆԳԻՒՄԻ մէջ ծախվում է Վը-
զօրով բժշկի Լ. մարանոցը: Լ. մարա-
նոցը գնել ջանկարողներին խնդրում են
գինը Լ. ն միջապէս տիրոջը նամակով
կամ անձամբ:
8—10

Ես օրերս դուրս եկաւ մամուլի տակից
„Կասադիրը“ հայկական ձայնագրութեան
հայ դպրոցների համար, աշխատանքու-
թիւն նշելի քահանայի նշանակումը: Քի-
շեալ ձեռնարկը յօրինված է ամենադիւ-
րին ոճով. բաժանված է դասերի և յաւա-
քաբանի հետ դրուած է դասագրքի նախա-
գիծը և դասաւարտութեան եղանակը: Ըն-
դունված է ներսիւսան դարանոցում, Գա-
լիանիս և ուրիշ դպրոցներում: Գինն է
30 կոպ. վաճառվում է 2. Գրիգորեանի
„Կովկասեան գրաւիճաւանոցում“ նոյնտեղ
վաճառվում է „Լա Մանկական ձայնագ-
րեալ երգարան“ հայ դպրոցների համար:
Գինն է 40 կոպ: Նաև „Մանկական երգա-
րան“ առանց նոտաների, ստորին դասա-
տանց համար, Գինն է 20 կոպ. գումա-
րով առնողներին զիջումն կը լինի:
6—10

ԸՆԴՈՂՈՒԹԻՒՆԵՆԻՑ ԼԵՒԻՒԼԵ-
ՐՈՂՈՒՆԵՆԻՑ ԶԵՆՆԵՐ. այդ հան-
դամները ծմբարտութեան մէջ կարելի է
համոզվել Ընդլիսկան խանութում, Եր-
ծրուո՞ւ գալերի յում: որտեղ ստացված են
մեծ քանակութեամբ թէ՛ յաւաքին կարգի,
չօլովալ, կակաօ—Ֆրայ և ուրիշ ապրանք-
ներ: խնայելի գինի և մրդի աղ ջերմի
դէմ: Կոնֆէկտներ հազի դէմ: Դանակներ
և պատառաքաններ, նոր ձեւի հրացան-
ներ և այլն:
10—10

„ՓՈՐՁ“

ԸՋԳԵՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԵԿԱՆ

ՄԻԵՄՍԵԼՅ ԷԼԵՆԻՍ

1881 թ.

(Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

ՀԻՆԳԵՐՈՐԴ շրջանի մէջ ևս „ՓՈՐՁ“ պիտի հրատարակուի միևնոյն հո-
գով և ուղղութեամբ և նոյն ծրագրի համեմատ ինչպէս և առաջին չորս տարիները:
Հանդէսը լոյս է տեսնում ԸՄՍԻ ԸՄԻՍ:

Իւրաքանչիւր համարի տպագրութեան թերթերի թիւը լինելու է 10-ից մինչև 15:
Ամբողջ տարին կազմում է չորս մեծադիր հատոր՝ ամէն մէկը աւելի քան 600-700
երեսից բաղկացած:

„ՓՈՐՁ“ բաժանորդագրիր ամենայն տեղ ՏԱՍԸ ՌՈՒՐԻԼԻ է:
Հոգեւորականները՝ Կոնստանտնուպոլիսի միջնորդութեամբ, իսկ ուսումնարանները թե-
մական վերատեսչի պատասխանատուութեամբ կարող են մաս առ մաս վճարել, այն է՝

Ստորագրելու ժամանակ—4 ռուբլի, մայիսի 1-ին—3 ռուբլի և սեպտեմբերի 1-ին
—3 ռուբլի:

Եւս անձինք, որոնք միանուաղ չեն կարող վճարել բաժանորդագրելը, գիմում են
իւրեանց պայմաններով խմբագրին:

Ստորագրուի կարելի է Տիֆլիսում՝ „ՓՈՐՁ“ ԽՐԱԿԱՆԱՆ, և ԿՈՆՏԱՆՏԻՆՈՒՍԻ
ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՒՄԻ: Կ. Պօլսում՝ գիմել Մեծ. Պետրոս Եֆ. ՎԱՍԻԼԵԱՆԻՆ. Ղալաթիա,
Կէօքէ-Օղլու խան մաքսատան դիմաց: Զմիւռնիայում՝ Գեք. Մելքիսեդեկ եպիսկոպոս
ՄՈՒՐԱՒԵԱՆԻՆ:

1876/77 1877/78 1879 և 1880 թ. «Փորձը» կարելի է ստանալ խմբագրատան
մէջ՝ իւրաքանչիւր շրջանի համար 10 ռուբլի հատուցանելով:
Նոր բաժանորդները առաջին փաստայով ստանում են բոլոր լոյս տեսած համարները:
Մեր հասցեն.—Тифлисъ. Въ Редацію Армянскаго Журнала „ПОРДЪ“.

Իսկ արտասահմանից—Tiflis. Redaction du Journal Armenien „PORDZ“

ԽՐԱԿԱՆԻ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՐԳԱՐ ՅՈՎ ԶԱՆՆԻՍԵԱՆ



ԻՒՒՒՒՍ ԳՐԵՑԻ ՎԿԵՅԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ-
ԶՈՑ (դեղ) ՈՍԿՐԵՑԵԻ ԵՒ ԲԵՎՄԵՏԻՉՄԻ ԴԵՄ:
Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց
ցուրի դործ դնել ամեն տեսակ ՈՍԿՐԵՑԵԻ ԵՒ ԲԵՎ-
ՄԵՏԻՉՄԻ դէմ, մանաւանդ մատներ և ջղերի ցուրի և մարմնի զանազան մա-
սերի կծկման դէմ, միակողմանի գլխացուի (միգրէնի) դէմ, գլխի կծկման դէմ և
մինչև անգամ ԿՐԿՆՎՈՂ, ԳՆԵՐՄԻ դէմ, սրտի անբերի և կրծքի բորբոքման դէմ,
րեկմատիկով հետեւանքների դէմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների
համար: Վկայականի միակ տէրը լիլիուս Գրեց, Վեննա, II Prater strasse № 49.
Ծախվում է 4 ռուբլի գործածութեան խրատներով Ռուսաստանի բոլոր դեղատոմսների
մէջ: Գլխաւոր պահեստը Մոսկովայի Բ. Կեօլեր և ընկ. խանութի մէջ, Նիկոլսկայա փո-
ղոցի վրա: Փոստային ծախսի համար 40 կ. է ուղարկվում:



7—25 (3)

1881. О ПОДПИСКЪ 1881.
НА ЕЖЕДНЕВНУЮ

ПОЛИТИЧЕСКУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ „ВИЛЕНСКИЙ ВѢСТНИКЪ“

Заявляя о продолженіи „Виленскаго Вѣстника“ въ будущемъ 1881-мъ году, мы не
обольщаемся надеждою привлечь къ себѣ значительное число читателей, далеко выходящее за
скромные предѣлы, составляющіе какъ бы часть нашего изданія. Жизнь Края, которому онъ
служить, не представляетъ на поверхности своей ничего выдающагося, способнаго потрясти
воображеніе, привлечь горячее вниманіе, сдѣлаться вопросомъ дня, въ особенности въ на-
стоящее время, по сравненію съ внутренними губерніями, пораженными тяжкими экономиче-
скими бѣдствіями. Напротивъ, медленно развивающаяся жизнь нашего разноплеменнаго, раз-
новѣрнаго и разноязычнаго Края слугаетъ изъ безчисленнаго множества мелкихъ, повседне-
выхъ, такъ сказать, будничныхъ явленій, понятныхъ только для наблюдателя, посвященнаго
во всѣ условія быта нашего Края: дѣлать же такія явленія понятными и интересными для
другихъ, раскрашивая національными цвѣтами и раздвывая ихъ значеніе для привлеченія
читателей, не только не можетъ быть нашею цѣлью, но прямо противоположно требованіямъ
разума, справедливости и даже достоинства изданія. Мы не обольщаемъ поэтому многого,
не даемъ громкихъ программъ, а просто заявляемъ, что будемъ, по мѣрѣ силъ, служить на-
шему Краю, искренно и добросовѣстно, въ предѣлахъ возможныхъ по мѣстнымъ условіямъ.
Этотъ стремленіе наше—служить не для раздора и выгоды, а для дѣйствительныхъ интересовъ
Края—повидимому оцѣнено нашимъ обществомъ, по крайней мѣрѣ, именно этому факту мы
позволяемъ себѣ приписать значительное увеличеніе числа нашихъ читателей въ истекающемъ
году. Пользуясь благоприятнымъ условіемъ этимъ, мы значительно увеличиваемъ съ наступа-
ющаго года форматъ „Виленскаго Вѣстника“

У С Л О В І Я П О Д П И С К И:

Безъ доставки.	Съ доставкой.
На 1 годъ 8 руб.	10 руб.
» 6 мѣс. 4 »	5 »
» 3 мѣс. 2 » 40 коп.	3 »
» 1 мѣс. — » 80 коп.	1 »

Плата за печатаемые объявленія взимается въ слѣдующемъ размѣрѣ: за одинъ разъ 10
к., за два раза 15 к., за три раза 18 к. со строки петита или за занимаемое ею мѣсто. За
объявленія, помѣщаемыя на первой страницѣ, а также объявленія на иностранныхъ языкахъ
плата удваивается.
Денежныя письма, статьи и корреспонденціи просятъ адресовать непосредственно: Въ
г. Вильну, въ редакцію „Виленскаго Вѣстника“.

Մինչև այժմ չեղած ԵԿԱՆՔԻ ԻՒՂ ԲԺԻՇԿ
ՀՄԻԴՏԻ, որ կաաարեալգործված է բժիշկ ՄԵՎԼԻ-
ԿԻԻ ԴԵՅԶԻՑ: Ըողջացնում է ամեն տեսակ խՈՒ-
ԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՎ ԲՈՒԲԼ Ըա-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՇ այդ իւղից,
մանրամասն խՐԱՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Եյդ
իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԳԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և Եյքքանդր ՎԵՆՑԵԼԻՑ, Կազանսկայա
փողոց № 3:
7—50

ՀԼՏ ՊԵՏՈՒԵԼՆԵ թէ՛Ց 1 ր.

20 կ. մինչև 2 ր. առնալաւը Ծախվում է
է ԸՆԳՂԻԵԼՆԵ ԽԵՆՈՒԹԻ
ՄԻՋ: ՄԻ և նոյն տեղը ստացվել են
գեղին ՄԵՀԱՇԿԱՆՆԵՐ և ուրիշ
ապրանքներ մեծ քանակութեամբ:
6—10

ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ Թէ՛Ց 1 ր.

20 կ. մինչև 2 ր. Փունը ամենալաւը, ստացված
է ան գլխի և ան խանութի մէջ: Նոյն
տեղը ստացված են մեծ քանակութեամբ
գ և զին. մա հա կա լն ր և ուրիշ ապ-
րանքներ և բ:
7—10

ՈՒՏԻԵՐԻՆ Լա գիտացող մի հայ է
հարկաւոր, նոյնպէս և մի ԲՈՒՐԻՆԻ-
ՐԵՆ Լա գիտացող, գիմել «ՄԵՇԼԻՈՒ»
խմբագրատունը:
1—3

ԻՆԶԻ ՊԵՏԱՆՈՒՐ ՈՐ ԵՆԳՂԻԵԼՆԵ ՄԵՎԼԻՉԻՆԸ Ծախվում է

է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէ՛յ
և այլ ապրանքներ: Որովհետև այդ մա-
գաղինը ստանում է թէ՛յ ուղղակի պահ-
տատներով, առնում է բոլոր ապրանքները
ուղղակի գործարաններից և բաւականա-
նում է փոքր շահով: Եյդող կայ սովորա-
բար 50,000 ֆունտ թէ՛յ առաջին տե-
սակի, կակաօ և չօլովալ-Ֆրայ, մուրաբա
և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան
ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ը-
կոլէկտներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-
մաններ, դանակներ, զրաւներ, թէ՛յաման-
ներ, բաժակներ, թամբեր, դուլպաներ
կանայն և տղամարդկանց, թաշիխաններ,
մակիւնաօշներ, կարկնիօր, թուղթ, մատիւ-
ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւի
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ժան քան թէ՛ ուրիշ տեղ: Երծրուո՞ւ
գալլերիւմ:
24—100